ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի փորձագետ Աննա Երվանդի Ակտարյանի կողմից *(2019 թվականի փետրվարի 25-ից օգոստոսի 26-ը)* **կատարած աշխատանքների վերաբերյալ**

Համաձայն 2019 թվականի փետրվարի 25-ին կնքված Պայմանագրի N8 դրույթների, իրականացվել են ստորև նշված աշխատանքները.

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) աշխատանքում, Հանրային-մասնավոր գործընկերության (ՀՄԳ) մեթոդի հնարավոր կիրառման նպատակով, Կոմիտեի կարողությունների գնահատման համար աջակցության դիմումի համար, հավաքագրվել են տեղական ՀՄԳ-ն առընչվող գործող և քննարկման փուլում գտնվող փաստաթղթերը, առկայության դեպքում դրանց թարգմանությունները, մինչև օրս ՀՀ իրականացված ՀՄԳ օրինակները և այլ առընչվողնյութեր:

Ուսումնասիրվել է արտերկրյա փորձը, դուրս են բերվել ՀՄԳ կիրառելի մոդելները՝ Կոմիտեի աշխատանքում կիրառելու համար:

Կատարվել է ուսումնասիրություն ՀՄԳ ծրագրերի համար անցկացվող մրցույթների, դրանց արդյունքերի գնահատման վերաբերյալ: Ներկայացվել է առաջարկություններ՝ մասնավորապես ճարտարապետական և բնապահպանական հանձնախմբերի ստեղծում, անցում կշռային գործակիցներով գնահատման:

Ք. Երևանի Սարմեն 1 շենքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքների և գնման գործընթացը կազմակերպելու նպատակով, ներգրավվել եմ իբրև պատասխանատու ստորաբաժանման անդամ:

Պատրաստվել են մայրաքաղաքում և մարզերում օտարման ենթակա գույքի փաթեթներ, վաճառքի կամ վարձակալության նպատակով հանրությանն իրազեկման համար ներկայացումներ: Աշխատանքային գործունեության ընթացքում մասնակցել է տեղազննման աշխատանքներին:

Մասնակցել է ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում աշխատակազմի վերաբաշխման կազմակերպման աշխատանքներին:

Կատարվել է անշարժ գույքի միջազգային մրցույթների դիտանցում՝ Կոմիտեի հնարավոր մասնակցությունը գնահատելու համար:

Կատարվել են մի շարք ընթացիկ հանձնարարություններ:

Պետական գույքի կառավարման կոմիտեի
պետական գույքի տնօրինման վարչության
պետական գույքի օտարման բաժնի փորձագետ

Աննա Ակտարյան

/ստորագրություն/

26 օգոստոս 2019
ք. Երևան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի **պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժին ներգրաված փորձագետ Աննա Երվանդի Ակտարյանի կողմից** հաշվետու ժամանակահատվածում՝ 2019 թվականի փետրվարի 25-ից մինչև օգոստոսի 26-ը կատարված աշխատանքները գնահատվում են դրական:

Պետական գույքի տնօրինման վարչության պետ
/գնահատող պաշտոնատար անձի պաշտոնը/

Ռոման Մարդոյան
/անունը, ազգանունը/

/ստորագրություն/

Պետական գույքի տնօրինման վարչության
պետական գույքի օտարման բաժնի պետ
/գնահատող պաշտոնատար անձի պաշտոնը/

Ալբերտ Գասպարյան
/անունը, ազգանունը/

ստորագրություն/

«26» 08 2019թ.